և բժշկեաց քեռին նորայ, ոչ միայն լուսաւոր առնելով հոգին քեռոյն իւրոյ 'ի յաւիտենական կեանս նահս փրկող 'ի բորոտութենէ աղտից, և արդ՝ երկայնամիտ լեր 'ի վերայ հաստուցման երախտուց նորայ և տես ներդործութիւն բնութեան մերոյ այսքան զանազանութիւն 'ի միջոցէ՝ ոչ դարոյ և ոչ հեռի ժամանակէ միոյ եթէ ոչ իբրև 'ի հօրէ մինչև ցժամանակն որդոյ. հայրն հաւատաց դաւանեաց և գտաւ շնորհս բժշկութեան, քեռ որդին զայրացմամբ սպան բժշկող քեռոյ և փրկութիւն տուող աշխարհին իւրոյ, պարտաւոր արար զինքն և մատնեաց ժողովուրդ իւր 'ի ծառայութիւն մեղաց, որովհետև բնութիւնս մեր այսքան փոփոխական է և այնքան անհաստատ 'ի վերայ մտաց իւրոց, որպէս տեսաք կամք Ասղդարոս հօր և կամք քեռ որդոյ Սանատրկոյ այնքան զանազան և հակառակ միմեանց որպէս լոյս ընդ խաւարի, ուրեմն հարկաւոր է մեզ ոչ ուտել և ոչ ըմպել և ոչ քնել եթէ ոչ նախ և յառաջ ընտրել Օրէնս բարի 'ի մէջ մեր և բնութիւնս մեր հնազանդ առնել Օրինաց մերոց շղթայիւ կապանօք անխախտելեօք որ ոչ երբէք ոչ ոք մարդ գոցի ազատութիւն գործելոյ գործս չար և ինքնակամ արարս, և եթէ գուցէ նշոյլ չարութեան գործոյ ումեքէ՝ որով ոք և իցէ եթէ ելցէ՝ խսկոյն պատժեսցի ըստ Օրինօք մերովք, զի նովաւ կացցուք և մեռցուք